ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 07/3 5876հ

«24» 06 2013թ.

<<ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ Շ.ԴՈՎԴՈՅԱՆԻՆ

Ի պատասխան Երևանի քաղաքապետին հասցեագրված Ձեր 19.06.2013թ. հ.201-ի 8 հարցման, հայտնում եմ, որ <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությանը վերաբերող բոլոր տվյալները, ապա նա դիմողին տալիս է տվյալների այն մասը, որն ունի, իսկ հնարավորության դեպքում գրավոր հարցման պատասխանում նշում է նաև այդ տեղեկատվությունը տնօրինողի /այդ թվում՝ արխիվի/ գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկատվությանը վերաբերող մյուս տվյալները:

Տվյալ դեպքում՝ <<Երևանի թիվ 1 շուկա>> ՍՊԸ-ին քաղաքաշինական փաստաթղթեր տրամադրելու համար հիմք է հանդիսացել վերջինիս կողմից ներկայացված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 07.08.2007թ. հ.2289143 վկայականը, իսկ ինչ վերաբերում է փակ շուկայի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու հիմքերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրմանը, ապա այն կարող եք ստանալ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից, որի մասին <<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> հասարակական կազմակերպությանը հասցեագրված 25.04.2013թ. հ.07/23786հ գրությամբ տեղեկացվել է:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Զ.ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կատ.Ա.Ստեփանյան